

ՄԱՅԷԼ ԱՈՒԼԵՆ ԿՐՏՆԵՐ. ՎԵՐԱԴԱՐՁ ԴԵՊԻ ԱՐՄԱՏՆԵՐԸ

Ծ. Ռ. ԱՐԵՎՅԱՆ

Առլեն հոր քաղաքացիական և գրական դիմանկարն ամբողջական, համակողմանի ու խորը դարձնելու համար չափազանց կարևոր է հնարավորինս հանգամանորեն խոսել Կրտսեր Առլենի՝ Հայաստան կատարած երկու այցելությունների, նրա «Տարագիրները» (1970) և «Դեպի Արարատ» (1975) ինքնակենսագրական գործերի մասին:

Մ. Առլեն Կրտսերը չի մեծացել հայկական միջավայրում, հայեցի կրթություն և դաստիարակություն չի ստացել և միայն հասուն տարիքում, արյան կանչին ունկընդիր, սկսել է մեծ հետաքրքրություն ցուցաբերել հարազատ ակունքների, արմատների, իր նախնյաց պատմության և մշակույթի նկատմամբ:

Մ. Առլեն որդին ծնվել է 1930 թ. Լոնդոնում: Տասը տարեկան էր, երբ ընտանիքը տեղափոխվեց Նյու-Յորք, որտեղ նա բնակվում է ցայսօր: Ժառանգական հակումներով նրան ևս վիճակված էր դառնալ գրչի մշակ: Գրել սկսել է 18 տարեկանից: Ավարտել է Հարվարդի համալսարանի գրականության բաժինը, ճանաչված լրագրող է Նյու Յորքում: Մի շարք գրքերի հեղինակ է՝ «Ընտանիք», «Հեռուստատեսություն», «Տարագիրները», «Ամերիկյան կարծիք», «Տեսարան առաջին մայրուղուց» և այլն: Իսկ 1974 թ. Հայաստան կատարած իր առաջին այցից հետո՝ 1975-ին, գրում է «Դեպի Արարատ» վեպ-էսսեն, որի համար արժանանում է «Ազգային գիրք» մրցանակին:

Դեռ պատանի Առլեն Կրտսերի համար մեծ անակնկալ էր, երբ դպրոցի տնօրենի կինը պատահաբար ակնարկեց, որ հայրը՝ Ավագ Առլենը, հայ է: Կամաց-կամաց որդու հոգում գլուխ է բարձրացնում սեփական ազգի, տոհմի, ցեղի գիտակցությունը, տեղի է ունենում հայացքների, հոգեբանության հեղաշրջում: Հայաստանը նրան պատկերանում է նախ իր պատմական ողբերգությամբ՝ սարսափելի կոտորածով, ապա ականատեսի պատմածներով, մամուլի միջոցով, իսկ Վիլյամ Սարոյանի հետ զրույցները խանդավառում են նրան, բորբոքում հետաքրքրությունը դեպի իր նախնյաց հայրենիքը. «Ես քեզ խորհուրդ եմ տալիս, ասում է Սարոյանը, եթե ուզում ես իմանալ հայերի մասին, պետք է գնաս Հայաստան, այսինքն՝ տեսնես այն, ինչ որ մնացել է նրանից: Դու պետք է գնաս Երևան՝ Խորհրդային Հայաստան»¹:

«Դեպի Արարատ»-ը սովորական ուղեգրություն-ուսումնասիրություն չէ, այլ պատմական յուրօրինակ էքսկուրս դեպի նախնյաց երկիրն ու մշակույթը: Կրտսեր Առլենի համար դա դյուրին գործ չէր. չէ՞ որ հորից նա ժամանակին հայերեն որևէ բառ չէր լսել, մեծացել էր իբրև իսկական ամերիկացի: Որդին միայն հետագայում՝ տարիներ անց, տեսավ ու հասկացավ հորը տանջող ցավը, ներքին դրաման, որը հայրը խնամքով թաքցնում էր շրջապատից ու հարազատներից, բայց դրանից հոգին չէր թեթևանում. ներսում գլուխ էր բարձրացնում հայը, մորմոքում էր կորստյան ցավը: Ցավը մխում էր, իսկ որդին այդ չնկատել չէր կարող: Ազնվագարմ հայորդու արժանապատվությունը վիրավորված էր, հպարտությունը՝ տրորված: Ինչո՞ւ իր ժողովուրդը չկարողացավ արժանապատվորեն պաշտպանվել, ինչո՞ւ սեփական հայրենիքը թողեց բարբարոս օսմանցում: «Հասավ

¹ Մայքլ Առլեն Կրտսեր, «Դեպի Արարատ», Եր., 2000, էջ 42:

կյանքիս այն ժամանակը, երբ ճանապարհ ընկա՝ պարզելու ինքս ինձ համար, թե ինչ ասել է հայ լինելը».- իր վեպ-էսսեն այսպես է սկսում Կրտսեր Առլենը:

Եվ սկսվում է որդու տագնապների, տառապանքի ու որոնումների դժվարին ճանապարհը... դեպի Արարատ:

Որպեսզի կարողանար անարգել շարունակել իր երթը դեպի Արարատ, Առլեն Կրտսերը ստիպված էր թոթափել կարծեցյալ «գտարյուն ամերիկացու» մտածողության և հոգեբանության արգելքները, որպեսզի համամարդկային արժեքների հսկայական շղթայի մեջ, դրա ներսում ճիշտ տեսներ ու գնահատեր սեփական ազգային արժեքները, կորուստներն ու Ավաճումները, որպեսզի կարողանար առանձնացնել, ճանաչել հայի ի՛ր տեսակը՝ հաղթահարելով բարոյահոգեբանական այն պատճեշը, որ կար իր ու իր միջև, մինչև որ գտներ սեփական ինքնությանը հասնելու ճշմարիտ ուղին: Իր ոգորումների ճանապարհին որդին ստիպված էր թոթափել նաև հոր հոգեկան դրաման, որ խորը նստած էր նաև իր ներսում:

Ընդհատ է, Առլեն Կրտսերն արդեն կտրել-անցել էր Դանեմարքայի իշխանի դժվարին երկրնորանքի ուղին, բայց դեռ ինքն իր համար ամբողջությամբ չէր բացահայտել, թե իրականում ինչ ասել է լինել հայ այս աշխարհում, ինչ ասելիք, ինչ խորհուրդ են բերում հայերը դարերի խորքից: Իր համար անչափ կարևոր այս հարցի պատասխանը ոչ միայն ինքն է տալու. այլև ընթերցողը, որը հեղինակի հետ երկար ճանապարհ է կտրելու դեպի Արարատ: Իսկ ինքը, այնուամենայնիվ, այսպես է բանաձևում. «Ինձ թվում է, թե հայոց պատմության համար հատկանշական էր, հավանաբար, որ այն շարունակվում է: Ինչպես բնության այլ երևույթների՝ ջրվեժի, լեռան պարագայում, անհնարին է չափել նրա գոյության արժանիքները կամ թերությունները, բայց նրա հարատևությունը կասկածից վեր է: Վերջին հաշվով ազնվական մի բան կա այդ հարատևության մեջ»:

1988-ի ահեղ երկրաշարժից հետո Առլեն Կրտսերը երկրորդ անգամ է լինում հայրենիքում: Նրա «Դեպի Արարատ» գիրքն արդեն շրջել էր աշխարհի 20 երկրներով և երկրագնդի մարդկանց տարբեր լեզուներով պատմել հայ ժողովրդի մասին: Գիրքը անարդար աշխարհի դեմ յուրօրինակ մի բողոք էր, և գրողը ցավով էր ճշում, որ Երկիր մոլորակի վրա դժվար է միաժամանակ հայ լինել և երջանիկ լինել:

Առլեն որդին, աղետալի երկրաշարժից հետո Հայաստան գալով, իրեն ավելի քան հայ էր զգում. տիրոջ աչքերով էր նայում, տիրոջ իրավունքով էր վերաբերվում իրեն շոջապատող ամեն ինչին. մի բան, որ չկա այնտեղ՝ Ամերիկայում, ուր, ինչպես ինքն է ասում, «քամու բերանն ընկած տերևի պես տեղից տեղ են քշվում»: Մարդը, որտեղ էլ որ լինի, հատկապես միայնության մեջ ջերմության կարիք ունի, փնտրում է հարազատ, մտերիմ հոգի. և որոնումները մշտապես տանում են դեպի արմատները: Սա հատուկ թեմա է, որ շատ է արծարծվում համաշխարհային գրականության մեջ: Այդ թեման շատ ավելի ծանոթ և հոգեհարազատ է հայ մարդուն, որը օտար ափերում Ծահնորի հերոսի նման փնտրում է «պճեղ մը անուշ սիրտ», որի ականջին մշտապես հնչում է Վ. Սարոյանի կանչը. «Հե՛յ, ո՞վ կա այդտեղ»:

Առլեն ընտանիքի մասին շատ է գրվել և խոսվել: Եղել են տարբեր և իրարամերժ կարծիքներ: Ավագ Առլենին մահից հետո էլ փորձել են ժամանակի դատին ներկայացնել, բայց մեզ համար, հայ ընթերցողի համար ամենակարևորը գրողի «հայատնայացության» պատճառը ներկայացնելը կամ նրան մեղադրելը չէ, այլ բուն ճշմարտությունը վեր հանելը, Առլեն հոր «մեղքի» մեջ նաև ժամանակի և հանգամանքների մեղավորությունը տեսնելը: Որդին հասկացել էր հորը, և այն, ինչ պարտավոր էր անել հայրը իբրև հայ, անում էր ինքը՝ իր վրա վերցնելով հայրական մեղքի և քավության ողջ ծանրությունը:

¹ Նույն տեղում, էջ 232:

«Դեպի Արարատ»-ը, որտեղ նաև ամերիկահայ հատվածի կյանքն է պատկերվում, Սփյուռքի կողմից ընդունվեց ըստ արժանվույն: Եվ չնայած գիրքն ընթերցվել և բարձր է գնահատվել նախ և առաջ հայ ընթերցողի կողմից, միևնույն է, գրողին հաջողվել է խոսել ամերիկացիների և մյուս օտարագրիների հետ:

Առկեն որդու բնորոշմամբ հայերի ճակատագիրը, նրանց հետ կատարվածը նման են թույնի, որը «տողոսել է մարդու օրգանիզմը և ժառանգաբար փոխանցվում է այս էլ քանի սերունդ, թույն, որը տանելի է միայն մինչև որոշակի սահման, որից հետո այն շղաձգում է մարդու ձեռք ու ոտքը կամ բերանը»³:

Գրողի իր առաքելության մասին Առկեն Կրտսերը պատկերավոր և դիպուկ խոսում է իր «Հայացք առաջին մայրուղուց» գրքի առաջաբանում. «20-րդ դարի ամենաակնառու դասերից մեկը ոչ թե տարբեր իրականությունների համակեցությունն էր, այլ տարբեր ոսպնյակների գոյությունը, որոնց օգնությամբ էլ տեսնում էին միևնույն իրականությունը»⁴: Որպես գրող Առկեն Կրտսերի արժանիքներից մեկն է այն, որ նա, մեկնաբաններից մեկի բնութագրմամբ, հեռուստատեսությամբ նայում է գրական ոսպնյակի միջով:

1991 թ. Դետրոյտ քաղաքում անգլերեն լեզվով տպագրվեց «Հայկական մշակույթն ու գրականությունը» գիրքը, որտեղ գետնեղված էր Մարգարետ Պետրոսյանի՝ «Մայքլ Առկեն Կրտսերը ազատագրում է հորը» ծավալուն հոդվածը: Մ. Պետրոսյանը նշում է, որ Առկեն Կրտսերը Սփյուռքի ընթերցողներից շատերին հայտնի է որպես հեռուստատեսային քննադատ: Նրան ճանաչում են նաև իր էսսեների ժողովածուներով և որպես «Նյու Յորքը» թերթի մշտական թղթակից: Ապա Մ. Պետրոսյանն ավելացնում է. «Իր երկու ինքնակենսագրական գործերում՝ «Տարագիրները» և «Դեպի Արարատ», Առկեն Կրտսերը գործի է դնում իր ընտանիքի անցյալի ոսպնյակները և իր ամերիկյան անցյալը, ինչն էլ օգնում է նրան բացահայտելու իր ճշմարիտ ինքնությունը»⁵:

Չենք կարող չհամաձայնել հոդվածագրի հետ, թե վերոհիշյալ գործերում ոչ թե որդին, այլ հայրն է կրում դիմակը՝ իր բարեկիրթ կերպարի տակ թաքցնելով տառապող հոգին: Իսկ Առկեն որդին իր անցյալի իրական պատկերը վերագտնելու համար ճանապարհորդում է դեպի իր համար դեռևս օտար երկիր: Վերոհիշյալ երկու գործերում նա առաջ է քաշում մի շարք կարևոր խնդիրներ ազգային ինքնության, հայր և որդի փոխհարաբերությունների, տարագրության ու իր իսկական հայրենիքի որոնման մասին: Որդին չի վարանում բարձրացնել ցավի, տառապանքի այն քողը, որի ներքո մշտապես թաքցված է եղել հայերի զայրույթն ու վրդովմունքը, դժգոհությունը սեփական ճակատագրի նկատմամբ:

Գրողի վերլուծությունները, նկարագրությունները շատ դեպքերում կրում են էթնիկ բնույթ: Հաճախ նա հայ ժողովրդի ու նրա առանձին զավակների վրա պատմության թողած ազդեցության մասին խոսում է սուր ու կտրուկ հետևություններով՝ ստանձնելով դատավորի, դատապարտողի դերը:

«Տարագիրները» և «Դեպի Արարատ» գրքերում հիմնական կերպարը Ավագ Առկենն է՝ անգլիահայ վիպասան, որը հանրաճանաչ դարձավ իր «Կանաչ գլխարկ» ռոմանտիկ վեպի շնորհիվ և 20-ականների ընթացքում բարձրաշխարհիկ հասարակության ուշադրության կենտրոնում էր: Վեպի ազդեցությունը ժամանակին շատ մեծ էր, և զարմանալի չէ, որ մարդկության դահիճը՝ Ստալինը, իր կողմ ինքնասպանության գլխավոր պատճառը համարել է «Կանաչ գլխարկը» վեպի ընթերցանությունը: Իսկ ահա Առկեն որդին այս գործը համարում է «աղճատված

³ Margaret Bedrosian, *Culture and Imagination in Armenia*, Detroit, 1991, p. 127.

⁴ Նույն տեղում, էջ 135:

⁵ Նույն տեղում, էջ 134:

հոգեվիճակի դասական դրսևորում», որի կոկ, հարթ մակերեսը հմտորեն թաքցնում է այն անվճռականությունը և մտատանջությունը, որ ունեցել էր հայր Առլենը վեպը գրելիս:

Հայրը փորձում էր ջնջել իր հայկական ինքնությունը, դատապարտում էր իրեն և իր ընտանիքին տարագրության համար, որը, իր կարծիքով, նույնքան ծանր վիճակ էր, որքան կոտորածներից փրկվածներինը:

Հոգեբանական այս պահանջի՞ն, ահա, հակաեջիտ է Առլեն Կրտսերի վերաբերմունքը հայության ու հայկականի նկատմամբ, երբ նա, խոսելով իր ընտանիքի, իր նախնիների մասին, նշում է, որ վերջիններս շատ հայերի նման սեր ունեին դեպի այգեգործությունը, գործարար մարդիկ էին, սրտաբաց, շատ էին կապված ընտանիքի և ծնողների հետ: Այսպես պատմում է: որ ապացուցելով իրենց ավանդապահությունը և անսահման հոգատարությունը զավակների նկատմամբ՝ Ավագ Առլենի ծնողները որդու հարսանիքի ժամանակ հայ քահանայ են բերում եկեղեցի՝ մտածելով, որ իրենց որդու ամուսնությունը ճիշտ և ընդունելի չի լինի, եթե արարողությունը տեղի ունենա լատինական ծեսով⁶:

Բայց, ահա, Առլեն Ավագը իր այս գունագեղ, աղմկոտ ու իրեն ամաչեցնող անցյալը միտումնավոր մերժում է: «Նա և իր հույն կինը կարծես սահում են ջազի դարաշրջանի մեղկ մակերեսի վրայով»⁷, - նշում է Մ. Պետրոսյանը: Հասկանալի է՝ նրանց երեխաներն էլ պետք է սովորեին ամենամոդայիկ ակադեմիականերում, իրենց ծնողների նման հազնվեին բժախնդիր ու խնամքով: Սակայն, ինչ էլ որ անեին նրանք, միևնույն է, չէր ջնջվելու, չէր անցնելու հոգու տարագրությունը: Ահա կարդում ենք մի հատված, որտեղ Առլեն Կրտսերը նկարագրում է իր հորը, որն անհանգիստ քայլում է տնային գրադարանում, օրվա մեծ մասն անցկացնում է կանաչ բազկաթոռին նստած՝ զբաղվելով ընթերցանությամբ՝ դառնալով ավելի ու ավելի քչախոս, և այս պատկերի միջոցով պարզ է դառնում, որ սա այն շրջանն էր, երբ Առլենի կյանքը մոտենում էր իր մայրամուտին:

«Տարագիրները» վեպի գլխավոր միտքը, այնուամենայնիվ, այն է, որ անցյալից փախչել չես կարող, ինչպես ինքը քեզնից, իսկ ազգային ծագումից հրաժարվելը միայն կարող է էլ ավելի բարդացնել, խճճել մարդու կյանքը, նույնիսկ եթե իսկական անունն էլ փոխի: Երկրորդ համաշխարհային պատերազմի սկզբին Ավագ Առլենը հեռանում է Անգլիայից: Դրությունը չի փոխվում, երբ ընտանիքը տեղափոխվում է Ամերիկա, այստեղ էլ գլուխ է բարձրացնում դժգոհությունը, որն առաջանում է նոր միջավայրին լիովին մերժելու անկարողության ցավազին ճիգերից:

Մինչ որդին ներկայացնում է իր հոր և նախնիների անցյալը, մեր առջև ինչոր չափով բացահայտվում է Ավագ Առլենի վերաբերմունքը ցեղասպանության և ընդհանրապես ամեն տեսակի բարբարոսության նկատմամբ: Այս ամենով հանդերձ՝ Առլեն որդուն հետաքրքրում է այն հարցը, թե ինչքանով կարող է ազգային պատկանելության առողջ գիտակցումը օգնել մարդուն բացահայտելու, գտնելու իր իսկական տեղը այն միջավայրում, ուր ինքը ապրում է: Եվ նա չի թաքցնում, որ հոր թուլություններին բախվելն իրեն ցավ էր պատճառում: Հայրը ջանք էր թափում թաղելու իր մեջ եղած իրական ներուժը, փորձում էր լինել ինչպես ուրիշները, բայց, ինչ էլ որ աներ, միևնույն է, չափազանց տարբեր էր նրանցից: Հոգեվիճակի երկվայրությունը շատ հաճախ խանգարում էր հորը մոտ լինել սեփական երեխաներին, շեղում էր նրա կյանքի բնական ընթացքը: Կեղծ խուսափումները, խորամանկություններն ու հերքումները միայն խճճվածություն էին առաջացնում նրա և զավակների փոխհարաբերություններում և վտանգում էին նրա վարկը շրջապատում, իրեն ճանաչողների, իր հետ շփվողների շրջանում: Չնայած այս

⁶ St'u Michael Arlen J., Exiles, New York, 1970, էջ 91:

⁷ Margaret Bedrosian, Աշվ. ստեղծ., էջ 125:

ամենին՝ Ավագ Առյուծը մարդկանց հետ շփվելիս բավականին գործնական էր ու ճկուն: Եվ որդին պատմում է. թե ինչպես է հայրը մի անգամ իր այդ հատկությունների շնորհիվ Հոլիվուդում աշխատանքի ընդունվել՝ շփոթության մեջ գցելով, մոլորեցնելով ադմինիստրատոր Մայերին, և վերջինիս հետ շահավետ պայմանագիր է կնքել՝ պարտավորվելով սցենարներ գրել Հոլիվուդի համար: Հայտնի է, որ հայր Առյուծը լիարժեք չի հանգրվանել նաև Ամերիկայում, և ընտանիքը որոշ ժամանակ ապրել է Ֆրանսիայում: Արդեն հասուն տարիքում որդին հասկացել է, որ ինքը շատ թանկ է վճարելու այն բանի համար, որ ծնողները հրաժարվել էին իրենց բուն մշակույթից ու ապրելակերպից: Սակայն հոգու վրա իջած այդ ծանր բեռը թեթևանում է, երբ հիշում է իր անգլիաբանակ հորեղբորը՝ Թագին (իսկական անունը Թագվոր էր). «...Իսկ Թագին՝ այդ հրաշալի հայրը, երբեք չէր փորձում լինել անգլիացի կամ դրա պես մի բան: Բայց իսկական հայ լինելով՝ միևնույն ժամանակ անգլիացի էր, ուներ շատ բարեհունչ անգլիական ձայն և անգլիական հետաքրքրություններ: Նա ուներ կարմրավուն դեմք և լիաթոք ծիծաղ, սիրում էր այգիներն ու բուսականությունը, սիրում էր բանջարանոցը: Թագվոր Գույումջյան: Նա իսկապես շատ համակրելի անգլիահայ էր»⁶:

Եվ հորեղբոր կերպարը ողջ պատմության ընթացքում օգնում է Կրտսեր Առյուծին, որ կարողանա անվերապահորեն ապավինել հարազատ արմատներին, ծնողի ներքին խոփությունը թոթափի իր վրայից: Նրան ուրախացնում է այն, որ հորեղբայրը երբեք չէր խճճվում «հայ» կամ «անգլիացի» պիտակների միջև, չէր փախչում իր ինքնությունից և ճիշտ էր գնահատում իր ներկան: Ամենօրյա զբաղմունքի, նախասիրությունների մեջ նա հավասարապես և՛ հայ էր, և՛ անգլիացի:

Այնուամենայնիվ դժվար էր խուսափել ապակողմորոշումից, քանի որ շատ հաճախ ազգային ինքնության գիտակցությունն ու ընտանիքի ամրությունը այնքան են խարխլվում և աղոտանում, որ հնարավոր չի լինում հասկանալ, ընդունել հարազատ ծնողներին: Առյուծ Կրտսերը նկարագրում է, թե ինչպես են մի օր ծնողները պատրաստվում գնալ մի բարձրաշխարհիկ երեկույթի: Նայում էր ու մտածում. «Ես զննում եմ հորս ձեռքերը, հիանում եմ նրա մետաքսե փողկապով, որին թանկարժեք գնդասեղ է ամրացված: Ես ինձ երջանիկ եմ զգում»⁷: Սակայն այս փոքրիկ երջանկությունից հետո լինում են պահեր, երբ որդին ունենում է իրարամերժ զգացումներ: Նա հիշում է այն օրը, երբ այցելում է հորը Հոլիվուդում. «Ես ինձ հարց տվեցի՝ իմ հա՞րցն է, թեև գիտեի, որ բեմահարթակի վրա կանգնած մարդն իմ հայրն է... Նա ինձ այնքան փոքր թվաց, ես երբեք չէի պատկերացնի, որ նա այդքան փոքր էր»⁸:

«Դեպի Արարատ»-ում որդին պատմում է, որ մայրը երբեմն, երբ տանը միայն ընտանիքով էին լինում, հորը Տիգրան էր կոչում: «Այդ պահերին էր միայն, որ ինձ թվում էր, թե անգլիացի լինելուց բացի նա մի ուրիշ մեկն է: Ինձ նաև այնպես էր թվում, թե Տիգրանը նրա ոչ պաշտոնական, մտերմիկ անունն է: Դա այդպես էր մինչև այն օրը, երբ մայրս բացեց գաղտնիքը. «Դա նրա հայկական անունն է»⁹:

Դրանից հետո, ինչպես վկայում է որդին, իրեն սկսել է հետապնդել «հայ լինելու» ստվերը, չնայած հայրը միշտ ժխտում էր որդու կասկածները:

Ի թիվս հակասական շատ կարծիքների՝ «Բազմավեպ» հանդեսում տպագրվում է գրականագետ Մեսրոպ Ծանաշյանի «Մայքլ Առյուծ և Վիլյամ Սարոյեան» հոդվածը, որտեղ ասվում է. «Մ. Առյուծն իր համբավի բարձրության վրա չմոռացավ

⁶ Michael Arlen J., նշվ. ստեղծ., էջ 89:

⁷ Նույն տեղում, էջ 159:

⁸ Նույն տեղում, 40-41:

⁹ Մայքլ Առյուծ Կրտսեր, նշվ. ստեղծ., էջ 3:

իր հայկական ծագումը: Ահավասիկ իսկական տաղանդի մը իրական արտահայտությունը միջազգային և Գևարգրով՝ հեռու բոլորովին ազգամուլ մտասևեռումներէ, որ աճնուկ մտքերու հատուկ է: Սակայն անգլիական միջավայրին մէջ ապրելով հանդերձ, իր արևելքցիի և հայու հոգին ու բոլոր երևակայությունը ի հայտ կու գան իր գործերու մէջ»¹²:

Ի հարկէ, Մանաշյանի այս միտքը վիճելի է, քանի որ ազգայնամուլ լինելը մի բան է, հայրենասեր լինելը՝ մեկ այլ, և Ավագ Առլենի պատասխանն էլ ընկալվում է իբրև ինքնապաշտպանության պէս մի բան: Իսկ ինքնարդարացման կարիք չէր լինի, եթէ գրողը սկզբից ևեթ չվախենար իր հայ լինելուց: Դրանով ևս միայն կազատվեր բազմաթիվ գլխացավանքներից: Օրինակ՝ Մ. Մանաշյանը պատմում է, որ Լոնդոնում մի հրեայի և կատմամբ դատական գործը ստվեր է գցում արդեն համբավավոր գրողի անվան վրա: Մամուլը, որ մինչ այդ փառաբանում էր Առլենին, սկսում է չարախոսել նրա մասին՝ անվանելով նրան «ինչ-որ հայ տղա, որը քաշքշում է անգլիական ժողովրդի ազնվապետական բարքերը և հրապարակում դրանք»: Վիրավորված Առլենը այս շրջանում է, որ իր «Կանաչ գլխարկը» 40 հազար դոլարով վաճառում է մի հրատարակչի և հեռանում Անգլիայից՝ հաստատվելով Միացյալ Նահանգներում: Հողվածագիրն այստեղ ևս ստում է. «Որքան տարբեր է բախտը հայ միջավայրի մը մէջ ապրող հայ տաղանդին՝ անկէ որ օտար միջավայրի մէջ փայլ կ'արձակէ»:

Առլեն Կրտսերը պատմում է, որ երբ ամերիկահայ գաղութը նշում էր գրողի հոբելյանը, ներկաներից մեկի հարցին, թէ Առլենն ընդունո՞ւմ է իր հայ լինելը, վերջինս նուրբ սրամտությամբ պատասխանում է. «Ես չեմ ընդունում հայ լինելս, պարզապէս ասում եմ, որ եմ: ...Ինչ համար քիչ արժեք ունի անհատի ազգությունը, աշխարհի բոլոր դժբախտություններն ազգայնամուլության արդյունք են. նախանձ, գծություն, պատերազմ, մոռացե՛ք այս բոլորը»¹³:

Ի տարբերություն «Տարագիրները» վեպ-էսսեի՝ «Դեպի Արարատը» ոչ թէ վերարտադրում է հայկական անցյալը, այլ փորձում է ճշմարիտ գույներով ներկայացնել հայկական բնավորությունը և հայության կենսագրությունը կոտորածներից հետո: Այս գործում Առլեն Կրտսերը հայկական ոգին ներկայացնում է Արարատ լեռան պատկերով: Եթէ մանկական տարիքում լսած շատ առասպելներ հասուն տարիքում մի տեսակ խամբում են, դադարում են վառել մարդու երևակայությունը, արդեն հասուն տարիքում Առլեն Կրտսերը հասկանում է, որ Արարատ լեռը տարիների հետ, իրոք, ավելի է մեծանում, այն աստվածային է ու հազարամյակների ընթացքում մարդիկ նրա շուրջը առասպելներ են հյուսել, որոնք սերնդեսերունդ պատմվել ու պատմվելու են: Ու գրողը մի տեսակ ներքին հպարտությամբ խորհրդածում է. «...Եվ, անխուսափելիորեն Տապալը, ուրիշ որտե՞ղ»¹⁴:

Հպանցիկ ներկայացնելով պատմական դեպքերն ու իրադարձությունները՝ Առլենը խոսում է հայ զորավարների ու զինվորների մասին: Այնուհետև ցավով է նշում, որ թուրքական իշխանությունների ձևավորման ու զարգացման ընթացքում պայքարի հզոր ալիքը կամաց-կամաց թուլացավ և վերացավ. հավաքական հոգեբանությունը նահանջեց, և Թուրքիայի տիրապետության տակ ապրող հայերը դարձան միջին խավին պատկանող մարդիկ, որոնք զբաղվում էին առևտրով, արհեստներով, թարգմանություններ էին անում՝ օգտակար լինելով թուրքին¹⁵:

Ինչպէս Գևարգրում է Առլեն Կրտսերը, թուրքերը սարդանքի վարպետներ են, որոնք անընդհատ խորամանկորեն, երբեմն էլ բացահայտ, խաղ են խաղում,

¹² «Բազմավէպ», Վենետիկ, 1943 թ., թիվ 7-12, էջ 69-74:

¹³ Michael Arlen J., նշվ. ստեղծ., էջ 103:

¹⁴ Մայքլ Առլեն Կրտսեր, նշվ. ստեղծ., էջ 49:

¹⁵ St'u Michael Arlen J., Passage to Ararat, New York, 1975, էջ 77:

Անճաղ խաղ՝ բարկություն կեղծելով ամեն անգամ, երբ հայկական ընթուստացումները «թուրք խառնամբոխին հասցնում են կատաղության»: Դա խնամքով մտածված, փորձված դասական այն դեպքն է, երբ թշնամին դարան է մտնում ու գաղտագողի հարձակվում, իսկ հետո սկսում է բողոքել, թե ինչն¹⁶ է զոհն աղմկում. չէ՞ որ ամեն ինչ բարենպաստ է իրենց՝ թուրքերի համար. դատարան ու դատաստան չկա, մեղադրող չկա. արա՛ ինչ ուզում ես: Իսկ ընդհանրապես կեղեքիչի կատաղությունը սադիստական բնույթ է կրում, երբ նա զգում է, որ շրջապատում թեկուզ փոքր-ինչ կասկածում են, որ կապեր է ունեցել, շփվել է իր զոհի հետ: Միշտ է նկատում Աղյեճը, որ երիտթուրքերի այսպես կոչված «ազատ» իշխանության հաստատմամբ և հենց հայերի ու այլազգիների կողմից այդ իշխանության չզիտակցված արդարացմամբ թուրքերի իշխանությունը հայերի վրա դառնում է լիարժեք: Ուստի օգտվելով նպաստավոր պայմաններից՝ Մեծ եղեռնի նախաձեռնողն ու կազմակերպողը՝ Թալեաթ Բեյը, անում է հետևյալ ցիմիկ, անբարոյական հայտարարությունը. «Մեզ մեղադրում են այն բանի համար, որ մենք տարբերություն չենք դնում անմեղ և մեղավոր հայերի միջև, բայց դա անելն անհնար է, քանի որ նրանք, ովքեր անմեղ են այսօր, վաղը կարող են մեղավոր դառնալ»¹⁷:

Լիներելով լրագրող, հեռուստաքննադատ՝ Աղյեճը հետևում է թուրքերի վարքագծին նաև եղեռնից շատ տարիներ հետո և ցավով է նշում, որ թուրքերին հաջողվել է իրենց զոհերին «անջատել աշխարհից և միմյանցից»՝ հասցնելով նրանց վերջնական մեկուսացման, որը հավասարազոր է հայերի հոգեբանական բնաջրնջմանը: Այստեղ խոսքն արդեն ավելի շատ Սփյուռքի հայության մասին է: Հենց այս խնդիրն է անհանգստացնում Աղյեճին, որը պարզ տեսնում ու հասկանում էր, որ ցեղասպանությունից հետո նորանոր կորուստներ եղան: Եվ գրողը բարձրացնում է իր և հայության համար կարևոր հարցը. ինչպե՞ս պետք է փրկվածը արդարացնի սեփական փրկությունը, երբ հայրենիքը գերեզմանի է վերածվել: Սակայն, ինչ էլ որ եղած լիներ, ապրել էր պետք: Իսկ ինչպե՞ս վարվել մեղավորության տանջող զգացումի հետ, երբ հիշատակները հանգիստ չեն տալիս, երբ պարտավոր ես պատասխան տալ սերունդներին: Գնալով խորանում է հոգու ցավը, երբ, մանավանդ, մտածում ես, որ աշխարհը մոռանում է հայերի հետ կատարվածը, կարծես ոչինչ էլ չի եղել: Եվ հոգեվիճակի նմանատիպ խաթարումները ի վերջո հանգեցնում են ինքնատելության:

Կարդալով «Դեպի Արարատը» և ուշադրություն դարձնելով գրողի վերլուծություններին և ընդհանրացումներին՝ գրաքննադատ, լրագրող Պիտեր Պրեսկոն ասում է. «Մի փոքր դրվագից հետևություն անելով՝ նա կարողանում է կազմել մեծ կարևորություն ունեցող թեզ»:

Նախքան իր և իր հոր հոգեհարազատությունը պարզելը, որդին նախ պետք է պարզեր, թե հայրը ինչ հարաբերություն ուներ մշակութային, հոգևոր այն ժառանգության հետ, որը մերժում էր: Իսկ մենք լավ գիտենք, որ մշակույթը լավագույնս է արտացոլում տվյալ ազգության, մարդկանց հետաքրքրություններն ու առանձնահատկությունները: Եվ ինչքան էլ որ Աղյեճ հայրը փորձում էր իրեն հեռու պահել այդ առանձնահատկություններից, այնուամենայնիվ ընկնում է նրանց թակարդը և դառնում այդ մշակույթի մի մասը: Իսկ ո՞րն է, վերջապես. առաջընթացի նախադրյալն ու գրավականը: Առաջին հերթին, կարծում ենք, ինքն իրենից չփախչելը, ճիշտ վարքագիծը, պահվածքը, դեմքը չկորցնելը և անտեղի, ավելորդ սահմանափակումներից ազատվելը:

Աղյեճ Կրտսերը զգուշանում է, երբեմն էլ խուսափում վերջնական դատողություն անելուց: Եվ ինչպես իր հերոսը՝ Թոմասյանն է տեսնում իր իսկական դեմքը հայելու մեջ, այնպես էլ գրողը թույլ է տալիս, որ անցյալը ներթափանցի ներկայի

¹⁶ Նույն տեղում, էջ 234:

մեջ: «Որքա՛ն տարօրինակ է առերեսումը սեփական անցյալի հետ, պարզապես հանդիպումը անցյալի հետ. դա նման է այն բանին, որ մարդ վերջապես կարողանում է ընդունել այն մեկին, որ միշտ իր կողքին է եղել»¹⁷:

Հետո կրկին անդրադառնում է 1915 թ. ցեղասպանությանը և հոր հոգին ազատ է արձակում դեպի այն սրբազան դաշտավայրը, ուր վեր է խոյանում աստվածաշնչյան լեռը: Այնուհետև ունկնդրում է իր ուղեկցորդին, որը պատմում էր, թե ինչպես է իր հայրը հանգիստ գտել Արարատի ստորոտում, որտեղ կեսօրին սիրում էր քնել: Այս պատկերը դառնում է մի տեսակ ազգահավաքման, սեփական ինքնությունը գտնելու խորհրդանիշ, կոչ: Հեռվում ապրող, դեպի հայրենիք ձրգտող, արմատներին ապավինող ամեն մի հայ իր ընտանիքի տապանը տեսնում է այստեղ՝ նոր կյանքի արարման ակնկալիքով և հավատով: Իսկ Արարատի փեշերին տիվանդորը օգնում է ավելի խորը գիտակցել սեփական ինքնությունը, նույնիսկ ենթագիտակցությամբ միանալ ակունքներին: Թերևս միայն այսպես կարելի է ապրել՝ զգալով հավերժական Արարատի հովանավորությունը: Եվ այսպես պետք է հաստատել առավել հզոր մի ես՝ ամեն տեսակի ազգային պիտակներից դուրս: Այստեղ ամրապնդվում են ոչ միայն ամենահամեստ երազանքի իրականացման հույսն ու հավատը, այլև վստահությունը բարեկեցիկ ապագայի նկատմամբ, ապագայի, որը ներդաշնակ է ազգային ինքնությանը:

Հայաստան կատարած ճամփորդությունից հետո Կրտսեր Առլենը խոստովանում է, որ հաճախ էր հիշում հորը. «Իր կյանքի վերջին տարում Ավագ Առլենն արդեն վատ էր քնում, հաճախ երազում խոսում էր և տեղից վեր թռչում: Դա պատահում էր այն ժամանակ, երբ նա երազում տեսնում էր իր հորը:

- Գիտե՞ս, նա (խոսքն Ավագ Առլենի հոր մասին է - Մ. Ա.) ճիշտ այնպիսին էր, ինչպիսին իրեն հիշում էի երեխա եղածս ժամանակ,- ասաց այդ առավոտ հայրս: - Բացի մազերից, որ սպիտակ էին ու խիտ: Երկարափեշ վերարկուով էր ու պողպատաշրջանակ ակնոցով: Մեր տան ճանապարհին կանգնած՝ խոսում էր հետս, կանչում էր ինձ: Բայց հայերեն էր խոսում, ու ես ոչինչ չէի հասկանում...»¹⁸:

Եվ որպեսզի պասի և հոր հոգիները վերջապես հանգիստ գտնեին, որպեսզի ժամանակի և իր զավակների նկատմամբ ծանր պատասխանատվության բեռը թթափվեր, թողը, որդին ցանկություն ունեցավ մոտիկից ճանաչել հազարամյակներ շարունակ դժվարին ճանապարհ անցած, բայց իր կենսունակությունը չկորցրած հայ ժողովրդին, «թափանցել հայի հոգեբանական կերպարի մեջ»: «Ես սկսեցի մտքումս վիճել հորս հետ, երբեմն նույնիսկ մեղադրել նրան, թե ինչո՞ւ է նա նահանջել ազգային, մշակութային այս հարուստ ժառանգությունից: ... Ես գիտեմ, որ իմ գրքերում մինչև վերջ չեմ խորացել հայի պատմական հոգեբանական կերպարի մեջ, ամբողջությամբ չեմ պարզել հայերի լինելության բարդ առեղծվածը, բայց մի քայլ առաջ եմ շարժվել. ես գտել եմ իմ հայությունը», - ասում է Կրտսեր Առլենը 1990 թ. նոյեմբերի 29-ին «Դպրություն» թերթում տպագրված հարցազրույցում:

«Տարագիրները» ու «Դեպի Արարատ» գրքերից հետո Առլենը շարունակում է ճամփորդությունների, որոնումների իր ողիսականը: Իսրայելական մի կինոընկերություն ֆիլմ էր պատրաստում Երուսաղեմի մասին: Առլեն-որդուն հրավիրում են Թել-Ավիվ՝ գրելու սցենարի այն մասը, որ վերաբերում էր Երուսաղեմի հին հայկական թաղամասին: Օգտվելով առիթից՝ գրողը չէր կարող չխոսել 1915 թ. ցեղասպանության մասին, քանի որ Երուսաղեմի հայկական թաղամասում ապաստան էին գտել եղեռնից փրկված հայեր: Երբ կինոնկարը ցուցադրվեց, թուրքական կառավարությունը հիստերիա բարձրացրեց. թուրքերը նույնիսկ բողոքեցին, որ Առլենին սենյակ են հատկացրել Թել-Ավիվի մի հայտնի հյուրանոցում: Դրանից հետո կինոնկարի ցուցադրությունը դադարեցվեց: Այդ առիթով

¹⁷ Նույն տեղում, էջ 254:

¹⁸ Մայրը Առլեն Կրտսեր, Ազվ. ստեղծ., էջ 234:

Կրտսեր Առլենը նկատում է. «Այստեղ է, որ ես լիովին հասկացա հորս. թաքցնելով իր հայ ինքնությունը՝ նա ցանկացել էր ինձ հեռու պահել հայկական հարցի գլխացավանքներից, որովհետև եթե հայ ես, ուզես թե չուզես, օրերից մի օր դեմահանդիման պիտի կանգնես այդ հարցին: Բայց ես կարծում եմ, որ 1915 թ. եղեռնը դատապարտելը միայն հայերի գործը չէ, այլ աշխարհի բոլոր ազնիվ մարդկանց, որովհետև մարդկության մի հատվածի դեմ նման ոճիրը առհասարակ ոճիր է համայն մարդկության դեմ: Եվ առավել ևս մենք՝ հայերս, երբեք չենք կարող չհիշել այն, չպահանջել նրա դատապարտումը...»¹⁹:

«Դեպի Արարատում» Առլենը առանձնակի համակրանքով ու սիրով է խոսում Վիլյամ Սարոյանի մասին. «Ահա և Վիլյամ Սարոյանն ինքը՝ Ֆրեզնոյի «Հիլթըն» հյուրանոցի նախարահում կանգնած: Վաթսունվեցամյա Վիլյամ Սարոյանը: Մազերը խիտ են, բայց արդեն արեխառն: Հաղթանդամ է ու հուժկու: Հրաշալի բեղերով: Նույնպես հուժկու ձեռքերով: Միծաղում է...»²⁰:

Առլենը հատկապես ընդգծում է այն, որ Սարոյանը, ինչպես ոչ ոք, կարողանում է այնքան անմիջականորեն զրուցել իր ընթերցողի հետ, զրուցել հարազատի նման, մտերմիկ ու անչար: Եվ գրողը չի կարողանում զսպել իր հիացմունքը. «...Իսկ Սարոյանի ձայնը...»: Ապա ավելացնում է. «...Կարդացողը հաճույքով մտածում է, որ այդ ձայնը պիտի որ լսած լինեին Ջ. Դ. Սելինգերը, Ռիչարդ Բրոթիգանը, Ջեք Քերուակը և անհատական ձայն ունեցող բոլոր գրողները, այն գրողները, երգիծաբաններն ու մերօրյա Ջգացմունքի դարաշրջանի բոլոր գրողները...»²¹:

Այդ ձայնի մեջ զարմանալի հայրական շեշտ և հոգատարություն կար, երբ Սարոյանը խոսում էր Կրտսեր Առլենի հետ: Նրանց առաջին հանդիպումն էր, բայց կարծես վաղուց իրար ճանաչում էին:

Այնուհետև Առլեն Կրտսերը պատմում է, թե ինչպես Ֆրեզնոյի ճանապարհին ավտոմեքենայի մեջ Սարոյանը հայերեն երգ էր երգում, իսկ ինքը չէր հասկանում բառերը: Դա մի երգ էր սիրո, անարդարության և հասունացող նոսրի մասին, ինչպես բացատրում է Սարոյանը, ապա ափսոսանք է հայտնում, որ Կրտսեր Առլենը հայերեն չգիտի. չէ՞ որ հայերենը հզոր, քաղցրահունչ, բանաստեղծական լեզու է:

Որդու այն հարցին, թե իր հորը Սարոյանը հայ համարու՞մ էր, վերջինս պատասխանել է.

- Անշու՛շտ: Հայը չի կարող հայ չլինել: Հայրդ, սակայն, այլ ուղի էր ընտրել: Կարծում եմ մտքինն ուրիշ էր: ...Տարբեր էինք, բայց նաև՝ մտերիմ: Դա դժվար է բացատրել²²:

Առլեն որդուն հետաքրքրում էր նաև այն, թե ինչու իր հայրը չի գրել կամ համարյա չի գրել հայերի մասին, իր հայրը, որ այնքան «փխրուն էր ու արբագեղ, այնքան տարբեր Սարոյանից»:

Եվ Սարոյանը հրաժեշտից առաջ ամփոփել է կարծես հենց իր՝ Կրտսեր Առլենի մտքերը. «Հայրերն ու որդիները միշտ տարբերվել են: Այնուհանդերձ նաև նման են: Կգա ժամանակը, դու էլ երևի կհասկանաս դա: Ինչևէ, հորդ, իրոք, սիրել եմ, հիմա էլ քեզ եմ սիրում: Իսկ դա ինչ-որ բան նշանակում է, այնպես չէ՞...»²³:

Առլեն որդին իր վեպ-էսսեն գրելիս իրեն արդեն տեսնում էր դարերի խորքից եկող մի շատ երկար շղթայի մեջ, շղթայի, որից ինչ-որ ժամանակ կտրված էր

¹⁹ Margaret Bedrosian, նշվ. ստեղծ., էջ 125:

²⁰ Մայքլ Առլեն Կրտսեր, նշվ. ստեղծ., էջ 39:

²¹ Նույն տեղում, էջ 40:

²² Նույն տեղում, էջ 41:

²³ Նույն տեղում, էջ 45:

եղել ոչ իր մեղքով: Եվ այդ շղթայի մեջ բոլոր մարդիկ միմյանց հարազատ էին: Իսկ Սփյուռքի հայ լիներ ամենևին էլ չէր ճշանակում արմատներից ու ակունքներից հեռանալ: Սփյուռքի հայերը որտեղ էլ բնակվեին, իրենց հետ տանում էին մի փոքրիկ Հայաստան, տանում էին հարազատ «Էրզրի» գույները, բույրերն ու սովորությունները:

Առլենն որդին ներկայացնում է Կալիֆոռնիա նահանգը, որտեղ մեծ թվով հայեր էին արտագաղթել: Հայերը այստեղ հողագործ էին, արհեստավոր, ինչպես իրենց նախնիները: Մի պահ թվում է՝ խոսքն ամենևին էլ Կալիֆոռնիայի կամ Ֆրեզնոյի մասին չէ, և մենք գտնվում ենք հին հայկական որևէ նահանգում, գավառում, գյուղում: Ահավասիկ հետևյալ հատվածը. «Մի օր կանգնած էի քաղաքամերձ մի դաշտում ու նայում էի մարտյան քամուց դողողացող մերկ մրգատու ծառերին, խաղողի այգիներին, որոնք նույնպես մերկ էին. գորշ հողին խոնարհված գորշ տնկիները տարածվում-կորչում էին հորիզոնում: ...Ամենուր ցցված էին մերկ ծառերը: Սալորեցիներ: Դեղձենիներ: Խնձորենիներ: Խաղողի վազեր: Բերրիություն: Կապտավուն լեռները կարծես լողում են երկնքի մշուշում»²⁴:

Պարզ է՝ այստեղ ինչ լեզվով էլ խոսի հայը, ոգին, մթնոլորտը, գույները հայկական են, և թվում է՝ այս վայրերում մշտապես թափառում է Հայաստանի լեռների սրնգահարը, այստեղ են նաև Համաստեղի հերոսները, որոնք երբեք չեն մոռանալու հարազատ լեռներն ու հայրենի երգերը: Ահա և ինքը՝ Գաղայայան ազգանունով: Նա ունի կոշտացած, մեծ ձեռքեր: Կալիֆոռնիայի այս դաշտն իրենն է, և նրա հայրն էլ այստեղ հողագործ է եղել. «Լավ մարդ էր իմ հայրը: Չարքաշ աշխատավոր էր: Հայրս որևէ ոճիր չէր գործել: ...Հին երկրից մորս հետ եկել են մոտավորապես 1900-ականներին»²⁵.- պատմում է Գաղայայանը և ավելացնում, որ սեխն առաջին անգամ Կալիֆոռնիա են բերել հայերը, և ապա՝ «այս հովտում անցեցվող սեխի մեծ մասը Առաքելյանինն էր: Ծեր Առաքելյանին կոչում էին Սեխի արքա»²⁶: Մեծ հովտի շուրջը ամենուր սփռված են փոքրիկ հայկական տնտեսություններ: Եվ հայոց պատմությունը ոչ մի տեղ՝ ո՛չ այստեղ՝ Ամերիկայում, ո՛չ Ավստրալիայում, ո՛չ Անգլիայում կամ Ֆրանսիայում, ո՛չ էլ այլուր չի ավարտվում, չի ընդհատվում: Եվ քանի որ գրողը շատ անկեղծ ու մաքուր է և՛ իր, և՛ ընթերցողի հետ, չի թաքցնում բուն ճշմարտությունը. «Կենսակերպս ամերիկյան է: Ազգակիցներս հայ են: Երբեմն՝ որպես եղբայր, երբեմն՝ որպես զարմիկ, հեռավոր զարմիկ: Երբեմն նրանց ավելի մոտ լինելու ցանկություն է առաջանում, բայց ոչ միշտ է անկեղծ այդ ցանկությունը: Մեր մոտիկությունն այնքան է, որքան կա»²⁷:

Իսկ երբ ասում է ժողովուրդ, Առլենը հասկանում է նույն լեզվով խոսող, նույն տարածքի վրա ապրող, ժողովված մարդկանց ամբողջությունն և ճշում է, որ հայերը սփռված են աշխարհով մեկ. նրանք օժտված են իրենց ազգային շրջանակներից դուրս գալու առանձնակի հատկությամբ, որը նրանց «շնորհել» է ճակատագիրը, և նվաճողներն են պարտադրել: Եվ հիմա մի փոքրիկ հողակտորի վրա, որ Հայաստան է կոչվում, ապրում է մի ժողովուրդ, որը իր նախնիներից ժառանգել է այս չնվաճված հողատարածքը, հպարտանում է իր նվաճումներով, կարող է ազատ երազել: Եվ այստեղ Առլենն Կրտսերն իր և իր նմանների անունից բանաձևում է. «...Ճշմարիտ և ներկայանում նաև, սակայն, հետևյալը. Այսօր լավ հնարավորություն կա, որ առողջ դատողությամբ, անհամբեր ու տաքարյուն երիտասարդները սկսեն ազատագրել իրենց հայրերին»²⁸:

²⁴ Նույն տեղում, էջ 36-37:

²⁵ Նույն տեղում:

²⁶ Նույն տեղում, էջ 37:

²⁷ Նույն տեղում, էջ 232:

²⁸ Նույն տեղում, էջ 233:

Կարծում ենք՝ արդեն որպես հայ կայացած, որպես հայ մկրտված Առլեն որդուն այլևս չի հետապնդի հոր ուրվականը, և Ավագ Առլենի հոգին վերջապես հավերժական հանգիստ կգտնի. չէ՞ որ իր, հոր, պապի, բոլոր տարագիր հայերի համար բացահայտվեց, հայտնագործվեց մի կարևոր ճշմարտություն ևս. այն, որ հայ ժողովրդի պատմությունը երբեք չի ավարտվում, չի ընդհատվում. այն շարունակվում է, ինչպես կյանքը, բնության երևույթները: Եվ այդ շարունակականի, անընդհատի մեջ է ողջ գեղեցկությունը:

Շ. Ր. ԱՐԵՎՅԱՆ - *Մայկլ Արլեն Մладший: Возвращение к корням.* - Статья обращена к романам-эссе сына англоязычного армянского писателя М. Арлена-“Путешествие на Арарат” и “Странники”, в которых автор говорит о ряде важных задач - о национальной независимости, о взаимоотношениях отца и сына, о странствиях души Арлена Старшего, о странниках и о поисках своей настоящей родины. Привлечены некоторые положения статей Маргариты Петросян “М. Арлен Младший освобождает отца” и Месропа Чанашьяна “Майкл Арлен и Вильям Сароян”, рассмотрение которых помогает обобщить литературно-гражданские портреты отца и сына.

Тема настоящей статьи всегда современна, важна для диаспоры. Особо акцентируется мысль о том, что человек, где бы он ни был, что бы с ним ни случилось, всегда должен сохранять чувство национального достоинства, национальное мышление, глубокое осознание своей независимости.